# «ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՍՐԱՀՆԵՐԻՑ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2020 թվականի________-ի N____-Ա

**ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՍՐԱՀՆԵՐԻՑ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7.9-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1.Սահմանել «Առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում առանձնացված հատուկ սրահներից այլ անձանց օգտվելու կարգ»-ը՝ համաձայն հավելվածի։

**ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ վարչապետի 2020թ.

________________ ___-ի

N ________-Ա որոշման

**ԿԱՐԳ**

**ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՍՐԱՀՆԵՐԻՑ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՕԳՏՎԵԼՈՒ**

1.Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում առանձնացված հատուկ սրահներից (այսուհետ՝ Հատուկ սրահ) այլ անձանց օգտվելու ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

2.Առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության Վարչապետի համաձայնությամբ Հատուկ սրահից կարող են օգտվել նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Արցախի Հանրապետության Նախագահը և նրան ուղեկցող ընտանիքի անդամները, ՀՀ փոխվարչապետները և նրանց ուղեկցող ընտանիքի անդամները, ՀՀ անվտանգության խորհրդի անդամները, ինչպես նաև ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի և սույն կետում նշված պաշտոնատար անձանց կողմից հրավիրված օտարերկրյա պաշտոնական պատվիրակությունների անդամները:

3.Կարգի 2-րդ կետում նշված պաշտոնատար անձանց և Ամենայն Հայոց Կաթողիկոսի արարողակարգային ծառայությունները չվերթից առնվազն երեք աշխատանքային օր առաջ դիմում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ նշելով Հատուկ սրահից օգտվելու անհրաժեշտության հիմնավորումը, մեկնող կամ ժամանող անձանց անձնագրային տվյալները և չվերթի կատարման ժամկետների վերաբերյալ տվյալները:

4.Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը քննարկում է դիմումը երկու աշխատանքային օրվա ընթացքում և դիմող կողմին տեղեկացնում է Հատուկ սրահից օգտվելու թույլտվության կամ դիմումի մերժման մասին: